ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2025 թվականի հուլիսի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 40-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը **«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14»**

Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 22.07.2025թ. և 23.07.2025թ. ստացված հարցադրումները և դրանց վերաբերյալ 24.07.2025թ. տրամադրված պարզաբանումները՝

<u>Հարցադրում 1</u>

«Հարգելի՛ գործընկեր, Խնդրում ենք հրավերի փաթեթում կցել տեխնիկական բնութագրերը: Այլ ֆայլ է կցված:»

<u>Պարզաբանում 1</u>

«Դատական դեպարտամենտի կարիքների համար ձայնագրառման համակարգերի, լազերային տպիչների և բազմաֆունկցիոնալ լազերային սարքերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) շրջանակում ձեռքբերվող ապրանքների տեխնիկական բնութագրերը սահմանված են ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով, իսկ հիշյալ հրավերին կից ֆայլով ներկայացված է երաշխիքի տեսքով ներկայացվող որակավորման և պայմանագրի ապահովումներում նշվող բենեֆիցիարի հաշվեհամարի և բանկի մասին տեղեկատվությունը:»

<u>Հարցադրում 2</u>

«Հարգելի՛ մրցութային հանձնաժողով, Մրցույթի 2-րդ և 3-րդ կետերով սահմանված են րոպեում նույն 40էջ/ր արագությամբ տպող լազերային տպիչ և բազմաֆունկցիոնալ սարք, բայց հավանաբար ինչ–որ վրիպակի պատճառով սովորական տպիչի համար սահմանվել է ավելի բարձր ամսեկան ծանրաբեռնվածության շեմ, քան բազմաֆունկցիոնալ սարքի համար, մասնավորապես 100,000 էջ 80,000 էջի դիմաց: Խնդրում եմ ճշգրտել: Խնդրում եմ հստակեցնել Լազերային տպիչի համար նշված «քարթրիջի ռեսուրս, առնվազն 3000 էջ, " լրացուցիչ քարթրիջ, ռեսուրսը՝ առնվազն 3000 էջ»: Արդյո՞ք այս պահանջը ենթադրում է, որ տպիչը պետք է կոմպլեկտում ունենա մեկ հատ 3000 էջ տպող քարթրիջ, և ապրանքի հետ մատակարարը պետք է առաքի ևս մեկ 3000 էջ տպող քարթրիջ: Բազմաֆունկցիոնալ սարքի բնութագրերում նշված է «տպելու արագությունը՝ առնվազն 40 էջ/ր, երկկողմանի duplex ռեժիմում առնվազն 34 էջ/րոպե» ինչն ակնհայտ է, որ տեխնիկապես հնարավոր չէ, քանի որ երկկողմանի տպագրության համար նախ տպիչը պետք է տպի առաջին էջն, ապա շրջի թուղթն ու տպի 2–րդ էջը: Հետևաբար, 40-50 էջ/րոպեում (միակողմանի) տպող սարքը չի կարող երկկողմանի տպել առնվազն 34 էջ/րոպե: Խնդրում եմ ճշգրտել:»

Պարզաբանում 2

««ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի (այսուհետ՝ ընթացակարգ) 2-րդ և 3-րդ չափաբաժիններով նախատեսված ապրանքները միմյանց հետ որևէ առնչություն չունեն և հիշյալ չափաբաժիններով նախատեսված յուրաքանչյուր ապրանքի տեխնիկական բնութագրում առանձին հստակ նշված են պատվիրատուի կարիքների բավարարման համար անհրաժեշտ նվազագույն տեխնիկական պարամետրերը: Ընթացակարգի շրջանակում 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջարկվող ապրանքները պետք է համապատասխանեն ընթացակարգի հրավերի պայմանագրի նախագծին (Հավելված 5) կից ներկայացված տեխնիկական բնութագրով սահմանված պահանջներին:

Միաժամանակ ընթացակարգի 2-րդ չափաբաժնով նախատեսված լազերային տպիչը պետք է ունենա գործարանային մեկ հատ առնվազն 3000 էջ տպող քարթրիջ, ինչպես նաև մատակարարի կողմից լրացուցիչ պետք է տրամադրվի ևս մեկ հատ առնվազն 3000 էջ տպող քարթրիջ:»

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Աիդա Հովհաննիսյանին:

Հեռախոս՝ 010 511-774:

Էլեկտրոնային փոստ՝ ddgnumner@court.am:

«ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-25/14» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով: